ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 24 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Արտակ Զեյնալյանի,

Հրայր Թովմասյանի,

Դավիթ Խաչատուրյանի,

Երվանդ Խունդկարյանի,

Հովակիմ Հովակիմյանի,

Էդգար Շաթիրյանի,

Սեդա Սաֆարյանի,

Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 30-ի N 499-Ա որոշմամբ հավանություն է տվել «2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում:

2. Համաձայնագրի նպատակներն են՝ միգրացիայի ոլորտում Կողմերի երկկողմ համագործակցության համար իրավական հիմքի ստեղծումը և միգրացիայի ոլորտում գործընկերային համագործակցության ճանապարհով հարաբերությունների ամրապնդումը՝ երկու պետությունների համագործակցության հետագա զարգացման համար:

3. Համաձայնագիրը կազմված է նախաբանից և տասնյոթ հոդվածից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. իրականացնել համագործակցություն հետևյալ ուղղություններով՝ վիճակագրական, իրավական և գիտամեթոդական տեղեկատվության փոխանակում, Կողմ պետությունների տարածքում գտնվող Կողմ պետությունների քաղաքացիների մասին տեղեկությունների փոխանակում, փորձի փոխանակում և գործնական օգնության ցուցաբերում համագործակցության գործընթացում ի հայտ եկող հարցերում, Կողմ պետությունների քաղաքացիների իրավունքների, այդ թվում՝ իրենց ընտանիքների անդամների բնակության իրավունքի պաշտպանություն՝ բնակության համար տրված թույլտվության ժամկետների ընթացքում, Կողմ պետությունների տարածքում գտնվելու (կացության) հիմքեր ունեցող անձանց իրավական կարգավիճակի հարցերի քննարկում (հոդված 3, մաս 1),

4.2. անհրաժեշտության և փոխադարձ պայմանավորվածության դեպքում իրականացնել տեղեկատվության և տեղեկությունների փոխանակում միգրացիոն օրենսդրության խախտումների և հայտնաբերված անօրինական միգրացիայի ուղիների, Կողմ պետությունների տարածքներում գործող անօրինական միգրացիայի կազմակերպմանը և իրականացմանը մասնակից իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց, անօրինական միգրացիայի նպատակով մուտքի արտոնագրերի և այլ փաստաթղթերի ստացման և դրանց օգտագործման միջոցների, Կողմ պետությունների միգրացիոն օրենսդրության, այդ թվում՝ միգրացիոն գործընթացների կարգավորման, ապաստանի և քաղաքացիության տրամադրման կարգի, անօրինական միգրացիայի դեմ պայքարի կազմակերպման, ինչպես նաև նշված օրենսդրության ոլորտներում փոփոխությունների, անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի և միջոցների և արտաքին միգրացիայի կարգավորման մեթոդների մասին (հոդված 4),

4.3. անօրինական միգրացիային հակազդման և իր քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով փոխանակել Կողմ պետությունների

քաղաքացիների մասին հետևյալ կատեգորիաների տեղեկություններ՝ Կողմ պետությունների քաղաքացիների հաշվառման (գրանցման), գտնվելու (կացության) վայրի մասին, հատուկ, մշտական և ժամանակավոր կացության կարգավիճակ, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքում աշխատանքի իրավունք ունեցող՝ Կողմ պետությունների քաղաքացիների մասին, մի Կողմ պետության քաղաքացիների՝ մյուս Կողմ պետության քաղաքացիության ստացման կամ վերականգնման, ինչպես նաև Կողմերից մեկի քաղաքացիության պատկանելության մասին, Կողմ պետությունների քաղաքացիների ստացած՝ անձը հաստատող փաստաթղթերի մասին (հոդված 5, մաս 1),

4.4. փոխանակել Կողմ պետությունների տարածք մուտք գործելու (կամ իրենց տարածքից դուրս գալու) սահմանափակման առկայության և հիմքերի, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքներից վտարված անձանց մասին տեղեկություններ (հոդված 5, մաս 2),

4.5. սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցել հետևյալ ձևերով՝ Կողմ պետությունների՝ միգրացիոն հարցերով զբաղվող իրավասու մարմինների աշխատակիցների պատրաստում և որակավորման բարձրացում, ներառյալ տվյալ ոլորտում սեմինարների և որակավորման կազմակերպում, համագործակցության ընթացքում ծագող հարցերով աշխատանքային խմբերի ստեղծում և փորձագետների փոխանակում, գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների անցկացում և միասնական գործողություններ պահանջող համագործակցության այլ ձևերի կիրառում, Կողմ պետությունների տարածքային մարմինների, ենթագերատեսչական կազմակերպությունների և իրավասու հիմնարկների աշխատանքներին ծանոթացում և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ միասնական ծրագրերի իրականացում (հոդված 7),

4.6. սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացնել շահագրգիռ Կողմի՝ աջակցություն ցուցաբերելու մասին գրավոր հարցումների հիման վրա՝ այդ թվում տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ (այսուհետ՝ նաև հարցում) (հոդված 8, մաս 1, հոդված 9, մաս 1, պարբերություն 1),

4.7. հարցումների ստորագրման իրավասություն ունեցող անձանց ցուցակների կամ ձևաթղթերի փոփոխության դեպքում մյուս Կողմին անհապաղ տեղեկացնել այդ մասին (հոդված 9, մաս 4),

4.8. անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման արագ և լիարժեք իրականացումն ապահովելու համար (հոդված 10, մաս 1, պարբերություն 1),

4.9. անհապաղ ծանուցել հարցում կատարող Կողմին հարցման կատարմանը խոչընդոտող կամ դրա կատարումն էապես հետաձգող պայմանների մասին (հոդված 10, մաս 1, պարբերություն 3),

4.10. հնարավոր սեղմ ժամկետներում հարցում կատարող Կողմին տեղեկացնել հարցման կատարման արդյունքների մասին (հոդված 10, մաս 3),

4.11. ապահովել, որ հարցման ժամկետը չգերազանցի 30 (երեսուն) օրացուցային օրը՝ դրա ստացման ամսաթվից սկսած (հոդված 10, մաս 3),

4.12. հարցում կատարող Կողմին գրավոր ծանուցել հարցման կատարման ամբողջական կամ մասնակի մերժման մասին՝ մերժման պատճառների նշումով (հոդված 10, մաս 4, պարբերություն 2),

4.13. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հարցման, դրա բովանդակության և կից փաստաթղթերի ստացման, ինչպես նաև օգնություն ցուցաբերելու փաստի գաղտնիության ապահովման համար (հոդված 11, մաս 1, պարբերություն 1),

4.14. հարցման կատարման գաղտնիության պահպանման անհնարինության դեպքում այդ մասին տեղեկացնել հարցում կատարող Կողմին (հոդված 11, մաս 1, պարբերություն 2),

4.15. առանց դրանք տրամադրած Կողմի համաձայնության՝ սույն Համաձայնագրի հիման վրա ստացված հարցման իրականացման արդյունքները չկիրառել այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք հարցվել և տրամադրվել են (հոդված 11, մաս 2),

4.16. առանց այն տրամադրած Կողմի լրացուցիչ գրավոր համաձայնության՝ ստացված տեղեկությունը չփոխանցել երրորդ Կողմին (հոդված 11, մաս 3),

4.17. առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով՝ իրականացնել անհրաժեշտ կազմակերպչական-տեխնիկական միջոցներ՝ ուղղված սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության պաշտպանությանը՝ անսպասելի կամ անօրինական ոչնչացումից, փոփոխությունից կամ տարածումից, ինչպես նաև ցանկացած այլ չարտոնված մուտքից կամ կիրառումից (հոդված 11, մաս 4),

4.18. Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը պահպանել ոչ ավել, քան դա պահանջում են այն նպատակները, որոնց համար այն փոխանցվել է, և այն ոչնչացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 11, մաս 5):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2024 թվականի ապրիլի 15-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1787